



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՌՉԱԿԱԳԻՐ
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2009

**ՀՌՉԱԿԱԳԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՍԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍԱՍԻՆ¹**

**Քանաձև՝ ընդունված Գլխավոր ասանդրեայի կողմից
ըստ Երրորդ կոմիտեի զեկույցի (A/48/629) 48/104
(20 դեկտեմբերի, 1993 թ.)**

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱԲԼԵԱՆ,

Ընդունելով կանանց նկատմամբ այն իրավունքների և սկզբունքների համընդհանուր կիրառման հրատապ անհրաժեշտությունը, որոնք վերաբերում են բոլոր մարդկանց հավասարությանը, անվտանգությանը, ազատությանը, անձեռնմխելիությանը և արժանապատվությանը,

Նշելով, որ այդ իրավունքներն ու սկզբունքները ամրագրված են միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում և Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայում,

Ընդունելով, որ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի արդյունավետ իրականացումը կնպաստի կանանց նկատմամբ բռնության վերացմանը, և Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին հռչակագիրը, որը բովանդակում է սույն բանաձևը, կամրապնդի և կյրացնի այդ գործընթացը,

Անհանգստացած լինելով այն հանգամանքից, որ կանանց նկատմամբ բռնությունը խոչընդոտներից մեկն է հավասարության, զարգացման և խաղաղության հասնելու ճանապարհին, ինչպես որ դա ընդունվել է Կանանց դրության բարելավման ոլորտում Նայրոբիի հեռանկարային ռազմավարություններում, որոնցում համալիր միջոցառումներ են հանձնարարվել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում, ինչպես նաև Կանանց նկատմամբ խտրականու-

¹ Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից: Իրականացրել է Համալսարանական կրթության կանանց ասոցիացիան:

թյան բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան լիովին իրականացնելու ճանապարհին,

Հաստատելով, որ կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների և կանանց հիմնական ազատությունների խախտում է, ինչպես նաև խոչընդոտում է կամ թույլ չի տալիս նրանց օգտվելու այդ իրավունքներից ու ազատություններից, և անհանգստացած լինելով կանանց նկատմամբ բռնության դեպքերում արդեն տևական ժամանակաշրջանում կանանց պաշտպանության և այդ իրավունքների ու ազատությունների խրախուսման ապահովման անկարողությամբ,

Ընդունելով, որ կանանց նկատմամբ բռնությունը տղամարդկանց և կանանց միջև ուժերի պատմականորեն ձևավորված անհավասար հարաբերակցության դրսևորում է, մի հարաբերակցություն, որը հանգեցրել է կանանց վրա տղամարդկանց գերիշխմանը և նրանց նկատմամբ խտրականությանը տղամարդկանց կողմից, ինչպես նաև խոչընդոտում է կանանց դրության համակողմանի բարելավումը, և որ կանանց նկատմամբ բռնությունը հիմնարար սոցիալական մեխանիզմներից մեկն է, որի միջոցով կանանց ստիպում են ենթակա դիրք գրավել տղամարդկանց նկատմամբ,

Անհանգստացած լինելով այն բանից, որ կանանց որոշ խմբեր, օրինակ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող կանայք, բնիկ բնակչության կանայք, փախստական կանայք, տեղահանված կանայք, գյուղական և հեռավոր շրջաններում ապրող կանայք, ապրուստի միջոցներից զուրկ կանայք, տարբեր բնույթի հաստատություններում կամ ազատազրկման վայրերում գտնվող կանայք, աղջնակներ, հաշմանդամ կանայք, տարեց կանայք և զինված բախումների շրջանների կանայք, առանձնապես ենթակա են բռնության,

Հիմնվելով Տնտեսական և սոցիալական խորհրդի 1990 թ. մայիսի 24-ի 1990/15 բանաձևի հավելվածի 23-րդ կետում գետեղված *եզրակացության վրա*, ըստ որի՝ այն փաստի ընդունումը, որ կանանց նկատմամբ բռնությունը ընտանիքում և հասարակությունում աճում է և առնչվում է բոլոր կանանց՝ անկախ ունեցվածքային և սոցիալական դիրքից, ինչպես նաև մշակութային մակարդակից, պետք է ուղեկցվի բռնության վերացման անհապաղ և արդյունավետ միջոցառումներով,

Հիմնվելով նաև Տնտեսական և սոցիալական խորհրդի 1991 թ. մայիսի 30-ի 1991/18 *բանաձևի վրա*, որով խորհուրդը հանձնարարել է հիմք մշակել միջազգային մի փաստաթղթի համար, որում որոշակիորեն քննվի կանանց նկատմամբ

բռնության խնդիրը,

Ողջունելով այն դերը, որ կատարում են կանանց շարժումները կանանց նկատմամբ բռնության հիմնահարցի բնույթին, լրջությանը և մասշտաբներին ավելի ու ավելի մեծ ուշադրություն հրավիրելու գործում,

Տազնասելով այն քանից, որ կանանց՝ հասարակության մեջ իրավական, սոցիալական, քաղաքական և տնտեսական հավասարություն ձեռք բերելու հնարավորությունները սահմանափակվում են, մասնավորապես, բռնության մշտական բնույթի պատճառով,

Համոզված լինելով, որ նկատի վերաշարադրյալը՝ անհրաժեշտություն է առաջանում հստակ և համընդգրկուն սահմանել *կանանց նկատմամբ բռնությունը*, հստակ ձևակերպել այն իրավունքները, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի արմատական վերացումը, պետությունների կողմից վճռական ջանքերի գործադրում իրենց ստանձնած պարտավորությունների կատարման համար և առհասարակ միջազգային հանրության վճռական ջանքերը կանանց նկատմամբ բռնության վերացման համար,

Հանդիսավոր կերպով հռչակում է սույն Հռչակագիրը կանանց դեմ բռնության արմատական վերացման մասին և կոչ է անում բոլոր ջանքերը ներդնել Հռչակագրին համատեղ ծանոթանալու և նրա պահանջները կատարելու համար:

Հոդված 1

Սույն Հռչակագրի նպատակների առումով «կանանց նկատմամբ բռնություն» տերմինը նշանակում է սեռական հատկանիշով կատարվող բռնության ամեն մի գործողություն, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ կարող է պատճառել կանանց, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ կամայական գրկում ազատությունից, լինի հասարակական թե անձնական կյանքում:

Հոդված 2

Կանանց նկատմամբ բռնությունը, ինչպես ենթադրվում է, ընդգրկում է հետևյալ դեպքերը, բայց չի սահմանափակվում դրանցով՝

- ա) ֆիզիկական, սեռական և հոգեբանական այն բռնությունը, որը կատարվում է ընտանիքում՝ ներառյալ ծեծը, սեռական հարկադրանքը աղջնակների

նկատմամբ ընտանիքում, օժիտի հետ կապված բռնությունը, կնոջ բռնաբարությունն ամուսնու կողմից, կանացի սեռական օրգանների վնասումը և կանանց վնաս պատճառող պրակտիկայի այլ ավանդական ձևեր, արտամտանական բռնությունը և շահագործման հետ կապված բռնությունը,

- բ) ֆիզիկական, սեռական և հոգեբանական այն բռնությունը, որը կատարվում է ընդհանրապես հասարակության մեջ՝ ներառյալ բռնաբարությունը, սեռական հարկադրանքը, սեռական նկրտումներն ու ահաբեկումը աշխատանքի վայրում, ուսումնական հաստատություններում և այլ վայրերում, կանանց առք ու վաճառքը և հարկադրումը պռոնկության,
- գ) ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը պետության կողմից կամ նրա թողտվությամբ, որտեղ էլ որ այն կատարվի:

Հոդված 3

Կանայք ունեն հավասար իրավունքներ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և ցանկացած այլ ոլորտներում մարդու բոլոր իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության և իրականացման գործում: Այդ իրավունքները ներառում են, մասնավորապես՝

- ա) կյանքի իրավունքը,
- բ) հավասարության իրավունքը,
- գ) ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը,
- դ) օրենքին համապատասխան հավասար պաշտպանության իրավունքը,
- ե) խտրականության չենթարկվելու իրավունքը, ինչ ձևով էլ որ այն դրսևորվի,
- զ) ֆիզիկական և հոգեկան առողջության բարձրագույն հասանելի մակարդակի իրավունքը,
- է) աշխատանքի արդար և բարենպաստ պայմանների իրավունքը,
- ը) խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի ձևերի չենթարկվելու իրավունքը:

Հոդված 4

Պետությունները պետք է դատապարտեն բռնությունը կանանց նկատմամբ և չպետք է վկայակոչեն որևէ սովորույթ, ավանդույթ կամ կրոնական շարժառիթ այդ բռնությունն արմատախիլ անելու գործում իրենց պարտականություններից խուսափելու համար: Պետությունները պետք է անհապաղ ձեռնամուխ լինեն

կանանց նկատմամբ բռնությունը բոլոր պատշաճ միջոցներով արմատախիլ անելու քաղաքականության իրականացմանը և այդ նպատակով պետք է՝

- ա) քննարկեն, եթե նրանք դա դեռ չեն արել, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի վավերացման կամ նրան միանալու կամ էլ այդ կոնվենցիային վերաբերող իրենց բոլոր վերապահումները հանելու հարցը,
- բ) ձեռնպահ մնան կանանց նկատմամբ բռնության գործադրումից,
- գ) պատշաճ ուշադրություն դարձնեն կանանց նկատմամբ բռնության գործողությունների կանխման ու հետաքննության, դրանց համար ըստ ազգային օրենսդրության պատժի հարցերին, անկախ այն հանգամանքից՝ նման գործողությունները կատարվել են պետության, թե մասնավոր անձանց կողմից,
- դ) ներքին օրենսդրության շրջանակներում մշակեն քրեական, քաղաքացիական, աշխատանքային և վարչական սանկցիաներ օրինախախտումների համար պատժման և բռնության գործողությունների ենթարկված կանանց վնասի հատուցման նպատակով. բռնության գործողությունների ենթարկված կանանց համար պետք է ապահովվի իրենց հասցված վնասի առնչությամբ արդարադատության իրականացման մեխանիզմների և, ազգային օրենսդրությանը համապատասխան, պաշտպանության արդարացի և արդյունավետ միջոցների մատչելիությունը. պետությունները պարտավոր են նաև կանանց տեղեկացնել այդպիսի մեխանիզմների միջոցով վնասի հատուցման հետ կապված իրենց իրավունքների մասին,
- ե) քննարկեն ցանկացած ձևի բռնությունից կանանց պաշտպանությունն ապահովելու համար գործողությունների ազգային պլանների մշակման հնարավորությունը կամ այդ նպատակով համապատասխան դրույթներ ընդգրկեն արդեն գոյություն ունեցող պլանների մեջ՝ նկատի ունենալով, ըստ անհրաժեշտության, այն աջակցությունը, որ կարող են ցուցաբերել ոչ կառավարական կազմակերպությունները, հատկապես այն կազմակերպությունները, որոնք զբաղվում են կանանց նկատմամբ բռնության հիմնահարցով,
- զ) մշակեն համընդգրկուն հիմքի վրա կանխարգելիչ մոտեցումներ և իրավական, քաղաքական, վարչական ու մշակութային բնույթի ցանկացած հնարավոր միջոցներ, որոնք օժանդակ են բռնության ցանկացած ձևերից կանանց պաշտպանությանը և ապահովեն մի դրություն, որը բացառի կանանց կրկնակի տուժումը այն օրենքների, իրավապահական մեթոդների կիրառման և այլ գործողությունների հետևանքով, որոնց դեպքում տարբերություն չի

դրվում տղամարդկանց և կանանց միջև,

- է) անհրաժեշտ աշխատանք տանեն այն հաշվով, որ, առավելագույն հնարավոր չափով, իրենց մոտ եղած ռեսուրսների հաշվառումով և, եթե անհրաժեշտ է, միջազգային համագործակցության շրջանակներում, բռնության ենթարկված կանանց, եթե անհրաժեշտ է, նրանց երեխաներին ցույց տրվի մասնագիտական օգնություն, օրինակ՝ վերականգնողական, երեխայի խնամքի և նրան պահելու, բուժման, խորհրդատվական, բժշկական ու սոցիալական սպասարկման, համապատասխան ծառայությունների ու ծրագրերի, ինչպես նաև աջակցության կառույցների ստեղծման ձևով և ձեռնարկեն ցանկացած այլ պատշաճ միջոցառումներ նրանց անվտանգությանն օժանդակելու, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեբանական վերականգնման համար,
- ը) պետական բյուջեներում նախատեսեն անհրաժեշտ միջոցներ կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման հետ կապված գործունեության համար,
- թ) միջոցներ ձեռնարկեն այն բանի համար, որ իրավապահ մարմինների այն աշխատակիցները և պետական պաշտոնատար անձինք, որոնք պատասխանատու են կանանց նկատմամբ բռնության գործողությունների կանխման ու հետաքննության և այդ հիման վրա պատժման համար, ստանան որակավորում՝ կանանց հատուկ պահանջումները հասկանալու անհրաժեշտության հաշվառումով,
- ժ) ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, առանձնապես կրթության ոլորտում, տղամարդկանց և կանանց վարքի սոցիալական և մշակութային մոդելները փոխելու և սեռերից մեկի անլիարժեքության կամ գերազանցության գաղափարների կամ տղամարդու և կնոջ դերերի մասին ստերեոտիպային պատկերացումների վրա հիմնված նախապաշարմունքները, սովորույթները և այլ գործելակերպերը արմատախիլ անելու նպատակով,
- ժա) օժանդակեն կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի տարածվածության հետազոտությունների անցկացմանը, տարածվածության վերաբերյալ տեղեկությունների հավաքմանը և վիճակագրական տվյալների ընդհանրացմանը, հատկապես այն տվյալների, որոնք վերաբերում են ընտանիքում գործադրվող բռնությանը, ինչպես նաև խրախուսել կանանց նկատմամբ բռնության պատճառների, բնույթի, աստիճանի ու հետևանքների և կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու և արմատախիլ անելու նպատակով ընդունված միջոցառումների արդյունավետության հետազոտու-

- թյունները, այդպիսի վիճակագրական տվյալները և այդպիսի հետազոտությունների արդյունքները պետք է հրապարակվեն ի ցույց բոլորի,
- ժբ) ձեռնարկեն միջոցներ՝ ուղղված այն կանանց նկատմամբ բռնության վերացմանը, որոնք առավել խոցելի վիճակում են,
- ժգ) այն զեկույցների մեջ, որոնք ներկայացվում են ի կատարումն Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գծով համապատասխան փաստաթղթերի դրույթների, ներառեն տեղեկություններ կանանց նկատմամբ բռնության և այն միջոցառումների վերաբերյալ, որոնք ձեռնարկվում են սույն Հռչակագրի իրականացման նպատակով,
- ժդ) խրախուսեն համապատասխան ղեկավար սկզբունքների մշակումը սույն Հռչակագրում շարադրված սկզբունքների իրականացմանն օգնելու համար,
- ժե) ընդունեն ամբողջ աշխարհում կանանց շարժման և ոչ կառավարական կազմակերպությունների կարևոր դերը կանանց նկատմամբ բռնության հիմնահարցի մասին իրազեկության բարձրացման և հիմնահարցի սրության թուլացման գործում,
- ժզ) պաշտպանեն և ամրապնդեն կանանց շարժումն ու ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը և իրականացնեն նրանց հետ համագործակցություն տեղական, ազգային և տարածաշրջանային մակարդակներով,
- ժէ) տարածաշրջանային միջկառավարական այն կազմակերպություններին, որոնց անդամներ են իրենք, խրախուսեն այն ուղղությամբ, որ նրանք իրենց ծրագրերում ներառեն համապատասխան միջոցառումներ կանանց նկատմամբ բռնությունն արմատախիլ անելու նպատակով:

Հոդված 5

- Միավորված ազգերի կազմակերպության համակարգի մարմիններն ու մասնագիտացված հաստատությունները պետք է իրենց իրավասության սահմաններում նպաստեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքների ու սկզբունքների ընդունմանն ու իրականացմանը և այդ նպատակով, մասնավորապես, պետք է՝
- ա) աջակցություն ցույց տան միջազգային և տարածաշրջանային համագործակցությանը բռնության դեմ պայքարի տարածաշրջանային ռազմավարության մշակման, փորձի փոխանակման և այն ծրագրերի ֆինանսավորման գործում, որոնք կապված են կանանց նկատմամբ բռնության արմատական

վերացման հետ,

- բ) աջակցեն այնպիսի խորհրդակցությունների և սեմինարների անցկացմանը, որոնք նպատակ ունեն բոլոր մարդկանց տեղեկացնելու կանանց նկատմամբ բռնության հիմնահարցի մասին և խորացնելու այդ հիմնահարցի ըմբռումը նրանց կողմից,
- գ) կանանց նկատմամբ բռնության հիմնահարցի արդյունավետ լուծման նպատակով աջակցություն ցույց տան, որ Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ընդլայնվեն կոորդինացիան և փոխանակումները մարդու իրավունքների բնագավառի պայմանագրերի հարցերով զբաղվող մարմինների միջև,
- դ) կանանց նկատմամբ բռնության բնագավառում առկա միտումների քննարկումը ներառեն Միավորված ազգերի կազմակերպության համակարգի կազմակերպությունների և մարմինների այն զեկույցների մեջ, որոնք նվիրված են սոցիալական միտումների և հիմնախնդիրների վերլուծությանը, ինչպես օրինակ՝ պարբերական զեկույցները համաշխարհային սոցիալական վիճակի մասին,
- ե) խրախուսեն Միավորված ազգերի կազմակերպության մարմինների և կազմակերպությունների միջև կոորդինացիան ընթացիկ ծրագրերում կանանց նկատմամբ բռնության հարցը ներառելու նպատակով՝ հատուկ ուշադրություն հատկացնելով առավել խոցելի վիճակում գտնվող կանանց,
- զ) աջակցեն կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ղեկավար սկզբունքների կամ ուղեցույցների մշակմանը՝ ուշադրության առնելով սույն Հռչակագրում հիշատակված միջոցառումները,
- է) համապատասխան կերպով հաշվի առնեն կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման հարցը իրենց մանդատների կատարման գործընթացում, այդ թվում և մարդու իրավունքների գծով փաստաթղթերի իրականացման առումով,
- ը) իրականացնեն համագործակցություն ոչ կառավարական կազմակերպությունների հետ կանանց նկատմամբ բռնության հիմնահարցի լուծման գործում:

Հոդված 6

Սույն Հռչակագրում ոչինչ չի դիպչում կանանց նկատմամբ բռնության արմատական վերացմանն առավել չափով նպաստող որևէ դրույթի, որը կարող է բովանդակել պետության օրենսդրությունը կամ որևէ միջազգային համաձայ-